



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ 55

26 ապրիլի 2012 թվական

ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 17 կետով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 23-րդ հոդվածի անցումային դրույթներ 2-րդ կետի դրույթներով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Քանի որ Մարալիկ քաղաքի բնակիչ՝ Վլադիմիր Լևոնի Քիչոյանի կողմից գնվել է Մարալիկի նախկին ագրոֆիրմային պատկանող ոչխարաբուծական գոմին կից կառույցը, որը գտնվում է ք. Մարալիկ Ռիգայի փողոց 1-ին նրբանցք N 5 հասցեում, ուստի կառույցին սպասարկման նպատակով, վերականգնման իրավունքով հատկացնել 0.07686 հա հողատարածք, վճարելով գումար, տվյալ պահին գործող հողի կադաստրային արժեքի չափով:
2. Վլադիմիր Լևոնի Քիչոյանի հետ օրենքով սահմանված կարգով կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ